Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
նոյեմբերի 21-ի N 1306 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարչական հիմնարկներին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ պետական կազմակեր-պություն) ամրացված՝ Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (այսուհետ՝ անշարժ գույք) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական կազմակերպություններին (այսուհետ՝ ոչ պետական կազմակերպություն) նվիրաբերելու հետ կապված հարաբերությունները:

2. Անշարժ գույքը ոչ պետական կազմակերպություններին նվիրաբերվում է պետական աջակցության միջոցով մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը նպաստելու նպատակով:

3. Անշարժ գույքը ոչ պետական կազմակերպություններին նվիրաբերվում է պայմանով, որ տվյալ գույքն օգտագործվելու է միայն նախնական մասնագիտական

(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով:

4. Պետական կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքը ոչ պետական կազմակերպություններին նվիրաբերվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա:

5. Նախքան ոչ պետական կազմակերպություններին պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք նվիրաբերելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը՝ նվիրաբերվող անշարժ գույքը ենթակա է գնահատման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշմամբ սահմանված կարգով:

II. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Նվիրաբերությամբ անշարժ գույք ստանալու համար ոչ պետական կազմակերպությունը հայտով դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն (այսուհետ՝ վարչություն)՝ ներկայացնելով՝

1) նվիրաբերություն ստանալու համար նախատեսված անշարժ գույքի մասին տեղեկությունները (գտնվելու վայրը, պատկանելությունը, մակերեսը, առկա այլ տեղեկություններ).

2) սույն կարգի 7-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթերը.

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվելիք ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ ներդրումային ծրագիր):

7. Նվիրաբերությամբ անշարժ գույք ստանալու համար հավակնող ոչ պետական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

1) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում ունենա առնվազն 10 տարվա գործունեության փորձ.

2) շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման արդյունքները վերջին հինգ տարվա ընթացքում պետք է լինեն միջինից բարձր.

3) կազմակերպության վերջին հինգ տարվա ներքին և արտաքին գնահատման ցուցանիշները պետք է առնվազն հավասար լինեն հանրապետական միջին ցուցանիշին.

4) կազմակերպության շրջանավարտների առնվազն կեսը վերջին հինգ տարվա ընթացքում պետք է ապահովված լինի աշխատանքով.

5) ոչ պետական կազմակերպության մանկավարժական-մեթոդական նորարարական գործունեությունը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական գործընթացում արդյունավետորեն կիրառելու, ուսումնական ձեռնարկներ հեղինակելու մասով) պետք է ճանաչված և արժևորված լինի կրթության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից.

6) ոչ պետական կազմակերպությունը պետք է ունենա ենթակառուցվածքային հավատարմագրում, ինչպես նաև ուսուցանվող մասնագիտությունների գծով առնվազն կեսից ավելին անցած լինի ծրագրային հավատարմագրում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված կարգի:

8. Ոչ պետական կազմակերպության կողմից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող ներդրումային ծրագիրը պետք է ներառի՝

1) ծրագրի տևողությունը, շահառուները (դրանց խմբերը), ակնկալվող չափելի արդյունքները (քանակական արտահայտությամբ).

2) կապիտալ ներդրումների չափը՝ ըստ տարիների.

3) աշխատողների մասնագիտական կարողությունների կատարելագործմանն ուղղված ներդրումների նկարագրությունը և չափը՝ ըստ տարիների.

4) սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների և բարձր առաջադիմությամբ օժտված ուսանողների կրթության հովանավորմանն ուղղված ներդրումների նկարագրությունը և չափը՝ ըստ տարիների.

5) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում նորարարական ուսումնական ծրագրերի և ուսումնատեխնիկական բազայի արդիականացման աշխատանքների ուղղությամբ կատարվող ներդրումների նկարագրությունը և չափը՝ ըստ տարիների:

9. Վարչությունը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ, հայտ ներկայացնելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է ոչ պետական կազմակերպության կողմից նվիրաբերությամբ անշարժ գույք ստանալու նպատակով ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված չափանիշներին ու ներդրումային ծրագրի պահանջներին՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով համապատասխան իրավասու մարմինների մասնագիտական եզրակացությունները:

10. Ոչ պետական կազմակերպության կողմից նվիրաբերությամբ անշարժ գույք ստանալու համար ներկայացված հայտի՝ սույն կարգով սահմանված պահանջներին

համապատասխանության մասին որոշման ընդունումից հետո երկամսյա ժամկետում վարչությունը՝

1) այն դեպքում, երբ անշարժ գույքն ամրացված է այլ պետական կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություն տվյալ անշարժ գույքը վարչությանն ամրացնելու մասին՝ այն ոչ պետական կազմակերպությանը նվիրաբերելու նպատակով.

2) այն դեպքում, երբ անշարժ գույքն ամրացված է վարչությանը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում անշարժ գույքը ոչ պետական կազմակերպությանը նվիրաբերելու մասին որոշման նախագիծ:

11. Ոչ պետական կազմակերպությանն անշարժ գույք նվիրաբերելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը ներառում է՝

1) նվիրաբերվող անշարժ գույքի նկարագիրը (գտնվելու վայրը, մակերեսը, գնահատված արժեքը).

2) նվիրաբերություն ընդունող ոչ պետական կազմակերպության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը.

3) նվիրաբերվող անշարժ գույքի օգտագործման նպատակը և ներդրումային ծրագրի հիմնական ցուցանիշները.

4) նվիրաբերության պայմանը.

5) այլ դրույթներ:

12. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է մերժել կամ թույլատրել ոչ պետական կազմակերպություններին անշարժ գույքի նվիրաբերությունը՝ հաշվի առնելով նաև կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և առաջնահերթությունները: Հայտի մերժումը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է ոչ պետական կազմակերպություն՝ կցելով մերժման հիմքը:

III. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՔՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Ներդրումային ծրագիրն անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրի անբաժանելի մասն է:

14. Նվիրաբերությամբ անշարժ գույք ստացած ոչ պետական կազմակերպությունը վարչություն է ներկայացնում ներդրումային ծրագրի իրականացման մասին ընթացիկ հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն):

15. Հաշվետվությունը կազմվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար և ներառում է նախորդ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածը:

16. Հաշվետվությունը վարչություն է ներկայացվում ներդրումային ծրագրի յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հոկտեմբերի 1-ը և պետք է ներառի՝

1) ծրագրի շահառուների (դրանց խմբերի) թիվը, ներդրումային ծրագրով նախատեսված քանակական արդյունքները.

2) իրականացված կապիտալ ներդրումների մեծությունը և դրանք հավաստող ֆինանսական հաշվետվությունները.

3) աշխատողների մասնագիտական կարողությունների կատարելագործմանն ուղղված ներդրումների մեծությունը և դրանք հավաստող փաստաթղթերը.

4) սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների և բարձր առաջադիմությամբ օժտված ուսանողների կրթության հովանավորմանն ուղղված ներդրումների նկարագրությունը, չափը, կատարված աշխատանքների փաստաթղթային հիմնավորումը.

5) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում նորարարական կամ ուսումնատեխնիկական բազայի արդիակա-

նացման աշխատանքների ուղղությամբ կատարված ներդրումների նկարագրությունը, կատարված աշխատանքների փաստաթղթային հիմնավորումը:

17. Հաշվետվությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վարչությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնում է ներդրումային ծրագրի ընթացքի գնահատումը:

18. Ներդրումային ծրագրի ընթացիկ գնահատումն իրականացվում է ներդրումային ծրագրով սահմանված բոլոր բաղադրիչների գնահատման միջոցով, հետևյալ բանաձևով՝

$(Բ_1 \times Կ_1 + Բ_2 \times Կ_2 \ldots + Բ_n \times Կ_n) \leq 100,$

որտեղ՝

1) $Բ_1 \ldots Բ_n$ – ը ներդրումային ծրագրով սահմանված յուրաքանչյուր բաղադրիչին տրված գնահատականն է, որը կարող է լինել 0-ից մինչև 100-ը ընկած միջակայքում.

2) $Կ_1 \ldots Կ_n$ – ը ներդրումային ծրագրով սահմանված յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման կշռային գործակիցն է, որը սահմանվում է 0-ից մինչև 1-ը ընկած միջակայքում, իսկ բոլոր կշռային գործակիցների հանրագումարը հավասար է 1-ի:

19. Ներդրումային ծրագրի ընթացիկ գնահատականը համարվում է դրական, եթե բոլոր բաղադրիչների գնահատման հանրագումարը 75-ից ավելի է, իսկ հակառակ դեպքում այն գնահատվում է բացասական:

20. Ներդրումային ծրագրի ընթացքի մոնիթորինգ իրականացնելու նպատակով վարչությունը, առանց նախազգուշացման, կարող է այցելություններ կազմակերպել անշարժ գույքի նվիրաբերությունն ընդունած ոչ պետական կազմակերպություն, իսկ կազմակերպությունը պետք է տրամադրի բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են մոնիթորինգի իրականացման համար:

21. Վարչության կողմից իրականացվող ներդրումային ծրագրի ընթացքի մոնիթորինգը չի կարող դուրս գալ անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրով

նախատեսված պայմանագրային պարտավորությունների իրականացման նկատմամբ հսկողության շրջանակից:

22. Ներդրումային ծրագրի մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվում են սույն կարգի 8-րդ կետում նշված ներդրումային ծրագրի բոլոր էական պայմանները և դրանք հավաստող փաստաթղթերը:

23. Ներդրումային ծրագրի ընթացքի մոնիթորինգի արդյունքների մասին կազմված արձանագրությունն ստորագրվում է վարչության ներկայացուցիչների և ոչ պետական կազմակերպության ղեկավարության կողմից, որի մեկ օրինակը պահվում է վարչությունում, իսկ մյուսը տրամադրվում է ոչ պետական կազմակերպությանը:

IV. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

24. Սույն կարգին համապատասխան ոչ պետական կազմակերպություններին անշարժ գույքի նվիրաբերության պայմանի կատարման նկատմամբ վերահսկումն իրականացնում է վարչությունը՝ անշարժ գույքի նվիրաբերության մասին կնքված պայմանագրի դրույթներին համապատասխան:

25. Ոչ պետական կազմակերպություններին անշարժ գույքի նվիրաբերության պայմանագրում պարտադիր կարգով սահմանվում է, որ՝

1) տվյալ անշարժ գույքը ոչ պետական կազմակերպության կողմից պետք է օգտագործվի միայն նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնելու նպատակով.

2) ոչ պետական կազմակերպության սեփականատիրոջ փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն է փոխանցվում նվիրաբերության պայմանի կատարման պարտավորությունը.

3) անշարժ գույքը նվիրաբերության պայմանին անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերողը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունի պահանջելու

նվիրաբերության վերացում, որի արդյունքում անշարժ գույքը վերադարձվում է նվիրաբերողին կամ նրա իրավահաջորդին:

26. Անշարժ գույքը նվիրաբերության պայմանին անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերողը կամ նրա իրավահաջորդը պարտավոր է պահանջել նվիրաբերության վերացում, որի արդյունքում գույքը վերադարձվում է նվիրաբերողին կամ նրա իրավահաջորդին:

27. Սույն կարգի 19-րդ կետին համապատասխան ներդրումային ծրագրի բացասական ընթացիկ գնահատականի դեպքում վարչությունը ոչ պետական կազմակերպության համար սահմանում է մեկ տարի ժամկետ՝ ներդրումային ծրագրի կատարումը բարելավելու համար:

28. Երկու տարի շարունակ սույն կարգի 19-րդ կետին համապատասխան ներդրումային ծրագրի բացասական ընթացիկ գնահատականի դեպքում վարչությունը պարտավոր է պահանջել նվիրաբերության վերացում, որի արդյունքում գույքը վերադարձվում է նվիրաբերողին կամ նրա իրավահաջորդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ